# Ընթերցանության խմբակ

Ընթերցանության խմբակը համարվում է արտադասարանային գործունեության կարևոր տեսակներից մեկը, որը նպաստում է աշակերտների զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը:
Խմբակի ընթացքում սովորողները ձեռք կբերեն և կամրապնդեն հետևյալ կարողությունները՝

- Լեզվական գրագիտություն
- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Մշակութային կարողունակություն

| | |
|---|---|
| Վերջնարդյունքներ | • Աշակերտը կարողանում է կարդալ և ներկայացնել կարդացածը բանավոր<br>• Վերլուծում և համեմատում է կերպարները<br>• Ներկայացնում է կարդացածը և լսածը տարբեր ինտերակտիվ եղանակներով<br>• Արտահայտում է սեփական հիմնավորված տեսակետը և պաշտպանում այն |
| Մեծ նպատակը | • Աշակերտը կկարողանա պատմել և նկարագրել իր կարդացածը<br>• Կկարողանա վերլուծել և համեմատել ուսումնասիրած կերպարներին<br>• Կկարողանա ներկայացնել կարդացածը, արտահայտել սեփական տեսակետը և արժևորել կերպարների դերը |
| Խնդիրներ | • Ստեղծել անկաշկանդ և ոչ |

| | |
|---|---|
| | ֆորմալ կրթական միջավայր, որում աշակերտները առավել ազատ կարտահայտվեն:<br>• Աշխատանքներ տանել բանավոր խոսքի և ճարտասանական հմտությունների զարգացման ուղղությամբ:<br>• Ուշադիր լինել առոգանության տեխնիկային, բառային ճիշտ արտասանությանը և ստեղծագործական հմտությունների զարգացմանը:<br>• Հաճախակի կազմակերպել դերային ներկայացումներ, գրական ցերեկույթներ, գրքի քննարկումներ, որում կարող են մասնակից դառնալ նաև խմբակի ոչ մասնակից աշակերտները և ուսուցիչները: |
| Շաբաթական պարապմունքների քանակը | Շաբաթական 1 օր |
| Ընդգրկված աշակերտների քանակը | 15 |
| Ընդգրկված աշակերտների դասարանային միջակայքը | 2-4 րդ (տարրական օղակ) |

## Սեպտեմբեր

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Հայկական ժողովրդական հեքիաթներ (Բարեկենդան) | • Ներկայացնել հեքիաթի կառուցվածքը<br>• Վերլուծել կերպարների բնավորության գծերը | • Հասկանում և ազատորեն վերարտադրում է կարդացածը<br>• Նկարագրում է կերպարներին և վերլուծում նրանց գործողությունները |
| 2 | Հայկական ժողովրդական հեքիաթներ (Ձախորդ Փանոս) | • Նկարագրել Փանոսի ձախողումների շղթան<br>• Ստեղծագործելու արդյունքում ներկայացնել | • Ընդգծում է հատվածները, որտեղ Փանոսը անհաջողություններ է |

| | | | |
|---|---|---|---|
| | | հեքիաթի սեփական այլընտրանքային վերջաբանը | ունենում<br>● Արտահայտում է սեփական տեսակետը և առաջարկում է այլընտրանքային լուծումներ: |
| 3 | Հայկական ժողովրդական հեքիաթներ (Ոսկու կարաս) | ● Դասակարգել հերոսների դրական և բացասական կողմերը<br>● Ցույց տալ ագահության կործանարար հետևանքները | ● Աշակերտը կատարում է կերպարների վերլուծություն բարոյահոգեբանական մակարդակում, մատնանշում է իր կարծիքվ դրական և բացասական բնավորության գծերը: |
| 4 | Հայկական ժողովրդական հեքիաթներ (Ամփոփում) | ● Խմբային աշխատանքի միջոցով ներկայացնել պաստառներ, որում ընդգրկված կլինեն երեք հեքիաթների նպատակները:<br>● Կատարել փոխադարձ գնահատում: | ● Ունենք ամփոփ պաստառներ և քննարկում՝ ինչքանով ենք հասել վերոնշյալ նպատակներին: |

## Հոկտեմբեր

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Վախթանգ Անանյան-պատմվածքներ (Մայր Արջը) | ● Կարդալ և վերարտադրել պատմվածքը:<br>● Ուսումնասիրել և ընդգծել պատմվածքի գլխավոր միտքը: | ● Վարժ կարդում և վերարտադրում է պատմվածքը, պատասխանում է հարցերին:<br>● Կարողանում է նկարագրել գլխավոր կերպարի գործողությունները և առանձնացնում է կարևոր միտքը: |
| 2 | Վախթանգ Անանյան-պատմվածքներ (Մայր Արջը) | ● Կարդալ և վերարտադրել պատմվածքը:<br>● Գնահատել Մայր արջի կատարած քայլերի կարևորությունը: | ● Վարժ կարդում և վերարտադրում է պատմվածքը, պատասխանում է հարցերին:<br>● Վեր է հանում Մայր արջի գործողությունները և հայտնում է սեփական տեսակետը դրանց կարևորության մասին: |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Վախթանգ Անանյան- պատմվածքներ (Արջի և վարազի կռիվը) | • Վարժորեն կարդալ պատմվածքից հատվածներ և մեկնաբանել դրանք:<br>• Վեր հանել պատմվածքի գլխավոր իմաստը: | • Ընկալում և վերարտադրում է կարդացածը:<br>• Առանձնացնում է հերոսներին և նրանց կերպարների փոխանցած ասելիքը: |
| 4 | Վախթանգ Անանյան- պատմվածքներ (Արջի և վարազի կռիվը) | • Գործնական աշխատանքի միջոցով դպրոցի բակում ստեղծել կենդանիների և թռչունների համար ապահով միջավայր: | • Կարևորում են բնության դերը և իրենց շրջապատում ստեղծում են բարենպաստ միջավայր: |

## Նոյեմբեր

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Ղազարոս Աղայան «Արևամանուկը» | • Կիրառելով տեքստի բառերն ու բառակապակցությունները ներկայացնել արձակ շարադրանք | • Կարողանում է առանձնացնել տեքստի արտահայտչական մ իջոցները և դրանցով կազմում է նոր մտքեր: |
| 2 | Ղ.Աղայան «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» | • Արտահայտիչ ընթերցել գրական տեքստը, արտահայտել մտքեր ենթատեքստի մասին | • Ըմբռնում է տեքստի իմաստը և դրանց շուրջ արտահայտում սեփական մտքեր: |
| 3 | Գրիմ Եղբայրներ «Սպիտակաձյունիկը» | • Սահուն կարդալ հեքիաթը և վեր հանել հեքիաթի գաղափարական բովանդակությունը: | • Սահուն կարդում է ստեղծագործությունը, հասկանում է բովանդակությունը: |
| 4 | Գրիմ Եղբայրներ «Սպիտակաձյունիկը» | • Նյութը ամրապնդելու համար դիտել ֆիլմը և պատասխանել հարցերին: | • Կինոդիտումից հետո պատասխանում է առաջադրվող հարցերին: |

## Դեկտեմբեր

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Ռուբեն Մարուխյան«Չի կարելիի արկածները» | • Սահուն կարդալ և ընդգծել տեքստի դաստիարակչական պահանջներ ներկայացնող բառերը և բառակապակցությունները | • Հասկանում է տեքստի իմաստը և տարբերակում է դաստիարակչական իմաստ պարունակող բառերն ու բառակապակցությունները : |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Ռուբեն Մարուխյան«Չի կարելիի արկածները» | • Համաստեղծել դպրոցական մշակույթի կանոններ և գրել դրանք պաստառի վրա: | • Ունենք համատեղ ստեղծած կանոններ և պաստառ: |
| 3 | Ջաննի Ռոդարի «Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում» | • Ծանոթանալ արտասահմանյան գրողների ստեղծագործություններին<br>• Ընթերցել ստեղծագործությունը և ընդգծել գլխավոր միտքը | • Ծանոթացել ենք արտասահմանյան ստեղծագործությունների առանձնահատկություններին:<br>• Առանձնացնում ենք գլխավոր կերպարի վարքագիծը և արտահայտում սեփական կարծիքը նրա քայլերի վերաբերյալ: |
| 4 | Ջաննի Ռոդարի «Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում» | • Վերարտադրել և պատմել ստեղծագործության հիմնական բովանդակությունը: | • Առանձնացնում ենք գլխավոր կերպարի վարքագիծը և արտահայտում սեփական կարծիքը նրա քայլերի վերաբերյալ: |

## Հունվար

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Գրիմ եղբայրներ «Մոխրոտը» | • Համեմատել հեքիաթի հերոսներին<br>• Գնահատել Մոխրոտի բնավորության դրական և բարելավման կողմերը | • Համադրության և հակադրության միջոցով համեմատում են հերոսներին:<br>• T-աձև աղյուսակի միջոցով առանձնացնում է Մոխրոտին բնութագրող հատկանիշները |
| 2 | Գրիմ եղբայրներ «Մոխրոտը» | • Վեր հանել հեքիաթի գաղափարական բովանդակությունը<br>• Գնահատել Մոխրոտի բնավորության դրական և բարելավման կողմերը | • Համադրության և հակադրության միջոցով համեմատում են հերոսներին:<br>• T-աձև աղյուսակի միջոցով առանձնացնում է Մոխրոտին բնութագրող հատկանիշները |
| 3 | Գրիմ եղբայրներ «Հենզելն ու Գրետելը» | • Ուշադիր և վարժ ընթերցել տեքստը՝ հետևելով առոգանությանը: | • Կարդում է տեքստը՝ պահպանելով ճիշտ առոգանությունը: |
| 4 | Գրիմ եղբայրներ | • Բնութագրել հերոսներին՝ | • Առանձնացնում է |

| | | | |
|---|---|---|---|
| | «Հենզելն ու գրետելը» | իրենց կատարած գործողություններով: | դրական և բացասական հերոսներին: |

## Փետրվար

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Օսկար Ուայլդ «Եսամոլ հսկան» | • Կարդալ պատմվածքը և առանձնացնել գլխավոր միտքը: | • Ընթերցանության մրցույթի միջոցով վարժ կարդում են նոր տեքստը և ընդգծում են գլխավոր միտքը: |
| 2 | Օսկար Ուայլդ «Եսամոլ հսկան» | • Ընդգծել հերոսների բնավորության դրական և բացասական գծերը: | • Ճանաչում է հերոսներին և տարբերակում նրանց բնավորության գծերը: |
| 3 | Էդուարդ Ուսպենսկի «Չեբուրաշկա» | • Ծանոթանալ հերթական արտասահմանյան գրականության օրինակին:<br>• Ընթերցել նյութը և պատասխանել հարցերին: | • Կարողանում է նյութը հասկանալով ընթերցելու արդյունքում պատասխանել առաջադրվող հարցերին: |
| 4 | Էդուարդ Ուսպենսկի «Չեբուրաշկա» | • Դիտել ֆիլմը և տալ Չեբուրաշկայի և մնացած կերպարների բնութագրում և համեմատում | • Կինոդիտման արդյունքում կարողանում է կատարել կերպարների համեմատում: |

## Մարտ

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Վահագն Գրիգորյան« Անտառային հեքիաթներ» | • Արտահայտիչ ընթերցել գրական տեքստը, արտահայտել մտքեր ենթատեքստի մասին | • Ըմբռնում է տեքստի իմաստը և դրանց շուրջ արտահայտում սեփական մտքեր: |
| 2 | Վահագն Գրիգորյան« Անտառային հեքիաթներ» | • Վերարտադրել և պատմել ստեղծագործության հիմնական բովանդակությունը: | • Առանձնացնում ենք գլխավոր կերպարի վարքագիծը և արտահայտում սեփական կարծիքը նրա քայլերի վերաբերյալ: |
| 3 | Ղազարաս | • Դերերով ընթերցել | • Կարողանում են |

| | | | |
|---|---|---|---|
| | Աղայան« Անահիտ» | ստեղծագործությունը և բեմականցնել: | կատարել դերային ապրումակցում և իրենց առոգանությամբ ստեղծում են համապատասխան կերպարներին: |
| 4 | Ղազարաոս Աղայան« Անահիտ» | • Դիտել համանուն մուլտֆիլմը և համեմատել իրենց բեմականցման հետ: | • Ֆիլմը դիտելուց հետո կատարում են համեմատությունների և կերպարների վերլուծություն: |

## Ապրիլ

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Հովհաննես Թումանյան «Խոսող ձուկը» | • Պատմել հեքիաթը և պատասխանել հարցերին:<br>• Վերլուծել ծերունու և ձկնիկի քայլերի իմաստը: | • Կարողանում Է կարդացածը վերարտադրել՝ օգտագործելով սեփական բառապաշարը: |
| 2 | Հովհաննես Թումանյան «Խոսող ձուկը» | • Բեմականացման միջոցով ներկայացնել հեքիաթը և դրա գլխավոր իմաստը: | • Կարողանում  են դերային խաղի միջոցով ստեղծել կերպարային միջավայր: |
| 3 | Շառլ Պերրո «Կոշկավոր կատուն» | • Ուսումասիրել և ծանոթանալ բովանդակությանը:<br>• Կատարել վերլուծություն Կատվի կամքի և բնավորության այլ գծերի վերաբերյալ: | • Կարողանում Է վերլուծել տեքստը և ցույց Է տալիս ստեղծագործական մոտեցում: |
| 4 | Եզոպոս «Առակներ» | • Խմբային աշխատանքի միջոցով տեղում ծանոթանալ մի քանի առակների և կազմել դրանց վերաբերյալ գծապատկեր: | • Յուրաքանչյուր խումբ տեղում ուսումնասիրում Է առակներից մի քանիսը և ստեղխում Է դրանք համառոտ ներկայացնող պաստառ-գծապատկեր: |

## Մայիս

| | Թեմա | Նպատակը | Վերջնարդյունք |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Անտուան դը Սենտ Էկզյուպերի « Փոքրիկ Իշխան» | • Կենտրոնացնել ուշադրությունը, որպեսզի մեկը մյուսին շարունակելով, հստակ ժամանակահատվածում կարդան տեքստի որոշակի հատված: | • Կարողանում են սահուն կարդալ տեքստը, ըմբռնել իմաստը և պատասխանել հարցերին: |
| 2 | Անտուան դը Սենտ Էկզյուպերի « Փոքրիկ Իշխան» | • Քարտեզագրել Փոքրիկ Իշխանի ճամփորդությունը՝ նրան հանդիպած դժվարություններով և հաջողություններով: | • Գործնական աշխատանքի միջոցով գունազարդ ներկայացնում են նրա անցած ճանապարհը: |
| 3 | Անտուան դը Սենտ Էկզյուպերի « Փոքրիկ Իշխան» | • Գրել ստեղծագործական շարադրություն «Ես ուզում եմ....» թեմայով: | • Դրսևորում են իրենց ստեղծագործականությունը և իրենց առաջ ունենալով բազմաթիվ հերոսների օրինակներ գրում են իրենց ցանկությունների մասին շարադրություն: |
| 4 | Ամփոփիչ դաս-միջոցառում | • Բաց դասի միջոցով ներկայացնել խմբակի գործունեության արդյունքները:<br>• Բեմականացնել 2-3 ստեղծագործություն: | • Ամփոփ ձևով ներկայացնում են խմբակի 1 տարվա ակտիվ գործունեությունը և բեմականացնում են իրենց ուսումնասիրած ստեղծագործություններից: |

Օգտագործված աղբյուրներ՝
1. Հայկական իրավական տեղեկատվական համակարգ՝
https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
2. Նորավանի միջնակարգ դպրոց, արտադասարանական ընթերցանություն 1-4րդ դասարաններ:
3. Պաշարների շտեմարան՝
https://lib.armedu.am/

Ծրագիրը կազմեց ՀՀ Տավուշի մարզի Չորաթանի Ա. Ուդումյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար Նարինե Քալանթարյանը